



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**

1. Դիտարկումներ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի [նախագծով](#) (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով՝ «Վարույթն իրականացնող մարմինը որպես բացառիկ միջոց դատարանի որոշման հիման վրա կարող է գործադրել համաչափ ֆիզիկական ուժ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով այնքանով, որքանով դա անհրաժեշտ է քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականության կատարումն ապահովելու համար և, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումն ապահովվելը հնարավոր չէ:»

Նախագիծը սահմանում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 24-րդ կետում և 57-րդ հոդվածի 2-րդ մասի նոր 5.2 կետում լրացվում է համապատասխանաբար դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի լիազորությունը՝ դատարան ներկայացնելու քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելու կամ համեմատական հետազոտման համար նմուշները հարկադրաբար ստանալու միջնորդությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ, 5-րդ, 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ և 4-րդ, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ, 86-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետերի համաձայն՝ տուժողը, կասկածյալը, մեղադրյալը և վկան պարտավոր են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման, փորձաքննության և բժշկական ստուգման, մատնադրոշման, լուսանկարման, ինչպես նաև տալ նմուշներ՝ համեմատական հետազոտման համար: Ըստ այդմ, Նախագծով նախատեսվել է վարույթն իրականացնող մարմնի՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի և վկայի նկատմամբ վերոնշյալ նորմերով ամրագրված պարտականության կատարումն ապահովելու նպատակով ֆիզիկական ուժ գործադրելու միջնորդությամբ դատարան դիմելու իրավասությունը:

Արդյո՞ք Նախագծով նախատեսված կարագավորումները համապատասխանում են միջազգային լավագույն փորձին, միջազգային իրավակարգավորումներին ու չափանիշներին:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ

հողվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:<sup>1</sup> Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը հանդիսանում է ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ տուժողի վարքագծից: Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ բնակչության կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում<sup>1</sup>: Ինչ վերաբերում է ազատությունից զրկված, կամ ընդհանուր առմամբ, իրավապահ մարմինների աշխատակիցների հետ առնչվող անձանց, նրանց նկատմամբ ցանկացած ֆիզիկական ուժի գործադրումը, որը խիստ պայմանավորված չէ նրանց վարքագծով, խաթարում է մարդկային արժանապատվությունը և, ի սկզբանե, հանդիսանում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքի խախտում<sup>2</sup>:

Եթե անձը համաձայնություն չի տալիս կամավոր կերպով հանձնել արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ, և դիմադրություն է ցուցաբերում իրավապահ մարմինների աշխատակիցների գործողություններին, ապա՝ տվյալ գործում հնարավոր չէ առանց ֆիզիկական ուժի գործադրման վերցնել համապատասխան նմուշներ:

Ինչ վերաբերում է բժշկական միջամտություններին, որոնց անձը ենթարկվում է իր կամքին հակառակ, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը պետությանը պարտավորեցնում է պաշտպանել անձանց ֆիզիկական բարեկեցությունը, օրինակ՝ վերջիններին տրամադրելով անհրաժեշտ բժշկական օգնություն: Յալլոհին ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany) 2006 թ.-ի հուլիսի 11-ի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ այն չի բխում բժշկական անհրաժեշտությունից, Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածները չեն արգելում կիրառել կասկածյալի կամքին հակառակ բժշկական միջոցառումներ (medical procedure)՝ հանցագործության մեջ անձի մասնակցության մասին ապացույցներ ձեռք բերելու նպատակով<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Նալբանդյանի ընդդեմ Հայաստանի (Գանգատներ թթ. 9335/06 եւ 23339/06) վճիռ մարտի 31, 2015 թ., կետ 95:

<sup>2</sup> Տե՛ս Bouyid v. Belgium (GC), թիվ 23380/09, սեպտեմբերի 28, 2015թ. §§ 88 եւ 100:

<sup>3</sup> Տե՛ս JALLOH v. GERMANY, թիվ [54810/00](#), հուլիսի 11, 2006, § 70:

Ընդ որում, ինչպես բուժման նպատակով իրականացվող միջամտությունների դեպքերում, անձին պարտադիր բժշկական միջոցառումներին ենթարկելու մեթոդը, իր մարմնից ապացույցներ դուրս հանելու համար չպետք է գերազանցի Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին վերաբերող նախադեպային իրավունքի համաձայն սահմանված խստության նվազագույն մակարդակը: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք տվյալ անձն ուժեղ ֆիզիկական ցավ կամ տառապանք է ունեցել պարտադիր բժշկական միջամտության արդյունքում<sup>4</sup>:

Այսպիսով, Եվրոպական դատարանը հաստատել է, որ Եվրոպական կոնվենցիան սկզբունքորեն չի արգելում պարտադիր բժշկական միջամտություն կիրառելը, որը կնպաստի հանցագործության քննությանը:

Դրական ենք գնահատում այն հանգամանքը, որ Նախագծով սահմանվել է անմիջական դատական վերահսկողություն՝ անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին միջամտության նկատմամբ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Նախագիծը պարունակում է խնդրահարույց կարգավորումներ և ենթակա է լրամշակման՝ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության գործունե երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Շեշտելով քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելու կամ համեմատական հետազոտման համար նմուշները հարկադրաբար ստանալու ինստիտուտի ներդրման և կիրառման բացառիկությունը՝ ինչը նաև նախատեսված է Նախագծով, ցանկանում ենք անդրադառնալ հետաքննության մարմնի՝ քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելու կամ համեմատական հետազոտման համար նմուշները հարկադրաբար ստանալու միջնորդությամբ հանդես գալու իրավասությանը:

Շամաձայն Նախագծի 1-ին հոդվածի՝ նախատեսվում է օրենսգրքի 188.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նորմով՝ «քննման, փորձաքննության ենթարկվելու կամ համեմատական հետազոտման համար նմուշներ տալու պարտականությունը կամովին չկատարելու դեպքում, եթե գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական տվյալները հնարավոր չէ ձեռք բերել դատավարական այլ եղանակով, ապա քննումը, փորձաքննությունը կամ նմուշներ ստանալն օրենքով սահմանված կարգով կատարվում են հարկադրաբար՝ դատարանի որոշման հիման վրա՝ իրավունքների միջամտության համաչափության սկզբունքի պահպանմամբ»:

Նորմում արտացոլված են այն երկու նախապայմանները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում կարող է միայն ներկայացվել անձի ֆիզիկական անձեռնմխելիությանը խիստ միջամտող միջնորդություն, այն է՝

<sup>4</sup> Peters v. the Netherlands, no. 21132/93, Commission decision of 6 April 1994, DR 77-B; Schmidt, cited above; and Nevmerzhtsky, cited above, §§ 94 and 97.

1. ցանկացած փաստական տվյալի համար չի կարող ներկայացվել նման միջնորդություն, այլ միայն այն տվյալի, որը գործի լուծման համար ունի էական նշանակություն,
2. 1-ին կետում նշված փաստական տվյալները հնարավոր չէ ձեռք բերել դատավարական այլ եղանակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Յալլոհն ընդդեմ Գերմանիայի գործով արտահայտած [նիքոնոռոշմամբ](#) հստակ ընդգծվել է, որ հանցագործության կապակցությամբ ապացույցներ ձեռք բերելու համար հարկադիր բժշկական միջամտության ցանկացած քայլ պետք է պատճառաբանված հիմնավորվի կոնկրետ գործի փաստերով: Մա հատկապես արդարացված է, երբ բժշկական միջոցառումը նախատեսված է հանցագործության մեջ կասկածվող անձից իրական ապացույցներ դուրս բերելու համար: Այս կապակցությամբ պետք է ուշադրություն դարձնել հանցագործության ծանրությանը: Իշխանությունները պետք է նաև ցույց տան, որ հաշվի են առել ապացույցների վերականգնման այլընտրանքային մեթոդները: Բացի այդ, բժշկական միջոցառումը չպետք է առաջացնի կասկածյալի առողջության համար երկարատև վնաս հասցնելու որևէ վտանգ<sup>5</sup>:

Այսպիսով, անձի ֆիզիկական անձեռնմխելիության խիստ միջամտությունը արդարացնող վերոնշյալ վավերապայմանները պետք է գործեն՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը), հարկադրանքի բնույթը, աստիճանը, անձի առողջության համար վնասի առաջացման հնարավոր վտանգները, ինչպես նաև՝ լրացուցիչ երաշխիքի առկայությունը»:

Ակնհայտ է, որ ֆիզիկական ուժի կիրառումը պետք է հանդիսանա բացառիկ, ծայրահեղ և վերջին միջոց, երբ այլ ապացույցների միջոցով հնարավոր չէ հաստատել էական փաստական տվյալը: Նշված բացառիկ միջոցի կիրառումը անպայմանորեն պետք է ապահովվի լրացուցիչ երաշխիքով, որին կանդրադառնանք ստորև:

Նման հանգամանքներում որքանով է արդարացված հետաքննության մարմնին ֆիզիկական ուժի կիրառման միջնորդությամբ դատարան դիմելու իրավասությամբ օժտելը, երբ նախաքննության մարմնի համեմատությամբ՝ վերջինս օժտված է առավել սահմանափակ լիազորություններով և չի բացառվում, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող առավել ընդարձակ քննչական և/կամ դատավարական գործողությունների միջոցով ստացվի այն ապացույցը, որով կհաստատվի փաստական տվյալն՝ առանց միջամտելու անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին: Նման պարագայում առաջանալու է մի

<sup>5</sup> Տե՛ս JALLOH v. GERMANY, թիվ [54810/00](#), հուլիսի 11, 2006, § 71:

իրավիճակ, երբ առավել «հեշտ», սակայն առավել միջամտող միջոցներով հետաքննության մարմինները ձգտելու են հասնել անձի մեղավորությունը հիմնավորող ապացույցների ձեռքբերմանը, ինչը խնդրահարույց է և ոչ իրավաչափ այն պարագայում, երբ որոշակի քննչական և դատավարական գործողությունների իրականացման միջոցով հնարավոր է նախաքննության փուլում ապահովել փաստական տվյալի ստացումը, այսինքն՝ կարելի է պնդել, որ հետաքննության մարմնի գործառությանին սահմանափակվածության պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արդեն իսկ առկա է այն կանխավարկածը, որ հետաքննության փուլում ֆիզիկական հարկադրանքը վերջին միջոցը չի հանդիսանում:

Քրեադատավարական հարկադրանքը՝ որպես վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio) պետք է հանդիսանա ցանկացած պարագայում, այսինքն, եթե օրենքով վարույթն իրականացնող մարմնին վերապահված այլ քննչական և դատավարական գործողությունները փաստացի հնարավորություն ընձեռեն ստանալ քննության համար նշանակություն ունեցող փաստական տվյալը, ապա վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է՝ ի սկզբանե ընտրություն կատարելիս՝ նախապատվությունը տալ նվազ խիստ գործողությանը՝ իրավաչափ նպատակին հասնելու համար՝ ընտրելով առավել պիտանի միջոցը: Ընտրության արդյունքը պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը: Ուստի, անթույլատրելի է քննչական գործողությունների կիրառման հարցը քննարկելիս նախապատվություն տալ ամենախիստ միջոցին՝ անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին միջամտությամբ ձեռք բերվող նմուշների և կատարվող այլ գործողություններին: Ընդ որում, միջամտությունը չպետք է հասնի ծանրության այն նվազագույն աստիճանի, որը կխախտի Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժից գերծ մնալու իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով անձի նկատմամբ ֆիզիկական ուժը՝ որպես բացառիկ և վերջին միջոց օգտագործելու սկզբունքը՝ առաջարկում ենք սահմանափակել վարույթն իրականացնող այն մարմինների շրջանակը, որոնք իրավասու են հանդես գալ ֆիզիկական ուժ կիրառելու միջնորդությամբ: Ֆիզիկական ուժ գործադրելու միջնորդությամբ հանդես գալու լիազորությունը վերապահել միայն քննիչին և դատախազին:

Միաժամանակ, անդրադառնալով վկայակոչած լրացուցիչ երաշխիքի առկայությանը, հայտնում ենք, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դեռևս 2019 թվականին կատարած [վերլուծությամբ](#) արձանագրել էր բժշկական վերահսկողության առկայության կարևորությունը՝ նշելով, որ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակորեն բաժանում է ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությունը բժշկական, ինչպես նաև

*ինվազիվ միջամտություն իրականացնելու դեպքերից, նշելով քրեական հետապնդման ենթարկված անձանց ընթացակարգային երաշխիքների կարևորությունը և անքակտելիությունը: Այսպիսով, Եվրոպական դատարանը հաստատել է, որ Եվրոպական կոնվենցիան սկզբունքորեն չի արգելում կիրառել պարտադիր բժշկական միջամտություն, որը կնպաստի հանցագործության քննությանը: Սակայն անձի ֆիզիկական անձեռնմխելիությանը ցանկացած միջամտություն, որն իրականացվում է ապացույցների ձեռք բերման նպատակով, պետք է մանրազնին ուսումնասիրության առարկա դառնա»:*

Նշված ուսումնասիրությունից բխել էր այն առաջարկությունը, որ համեմատական հետազոտությունների համար նմուշների պարտադիր հանձնումը սահմանվի միայն համապատասխան բժշկի ներկայության դեպքում: Հիմք ընդունելով 2019 թվականին կատարված և սույն վերլուծությունը՝ առաջարկում ենք, որ քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականության կատարումը հարկադրաբար ապահովելիս նախատեսվի բժշկական վերահսկողություն:

Լրացուցիչ երաշխիքների ամրագրման անհրաժեշտություն առկա է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի կարգավորման համատեքստում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը կայացնում է որոշում՝ քննում կատարելու մասին: Այդ որոշումը պարտադիր է այն անձի համար, որի նկատմամբ այն կայացվել է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում քննումը կատարվում է դատաբժշկության բնագավառի մասնագետի կամ բժշկի մասնակցությամբ: Քննումը, որը զուգորդվում է քննվող անձին մերկացնելու հետ, կատարվում է միևնույն սեռին պատկանող ընթերակաների ներկայությամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննիչն իրավունք չունի ներկա գտնվելու մյուս սեռին պատկանող անձին քննելիս, եթե քննումը զուգորդվում է այդ անձին մերկացնելու հետ: Այդ դեպքում, քննիչի հանձնարարությամբ, քննումը կատարում է դատաբժշկության բնագավառի մասնագետը կամ բժիշկը: Քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում քննիչը նմուշներ կարող է ստանալ փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձագետի կամ մասնագետի ներգրավումը քննմանը (ի տարբերություն նմուշների ստացման, երբ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է փորձագետի կամ մասնագետի մասնակցության պարտադիր պահանջ) կրում է հայեցողական բնույթ, որն իրացվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտության որոշման չափանիշները սահմանված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ: Որոշակի դեպքերում ոչ թե քննարկման պետք է դրվի անհրաժեշտության առկայության կամ բացակայության հարցը, այլ իրականացվի



մասնագետի կամ փորձագետի ներգրավումը՝ իմպերատիվ/պարտադիր պայմանով: Գործող օրենսդրության պայմաններում կարգավորումը նվազ վտանգավոր է այն առումով, որ ներկայումս քննումն իրականացվում է անձի համաձայնությամբ, սակայն, քանի որ նախատեսվում է ներդնել նաև քննման հարկադիր իրականացման կառուցակարգը, փորձագետի կամ մասնագետի, այդ թվում՝ բժիշկի ներգրավումը պարտադիր է: Բացի այդ՝ միայն բժշկի կամ մասնագետի առկայությունն արդյունավետ միջոց չի կարող գնահատվել, քանի որ ֆիզիկական ուժի գործադրմամբ իրականացված քննման, փորձաքննության կամ նմուշների ստացման իրավաչափությունը վիճարկելու դեպքում, անձի առողջական վիճակի հետ անհամատեղելի մեթոդների կիրառման հարցի շրջանակներում պետք է հիմնավորել նաև անձի առողջական վիճակի և քննման, փորձաքննության կամ նմուշների ստացման մեթոդների համատեղելիությունը և դրա մասին հայտնի լինելը վարույթն իրականացնող մարմնին:

Նշված խնդրի լուծմանն ուղղված քայլ կարող է հանդիսանալ մինչև ֆիզիկական ուժի կիրառումը բժշկի կողմից տրված եզրակացությունը՝ անձի առողջական վիճակի և միջամտող գործողության համատեղելիության վերաբերյալ:

«Կենսաբժշկության և մարդու իրավունքների մասին» եվրոպական [կոնվենցիայի](#) 5-րդ հոդվածով սահմանվում է, որ անձն իրավունք ունի նախապես ստանալու տեղեկություն՝ գործադրվող բժշկական (փորձագիտական) միջամտության նպատակի և բնույթի, ինչպես նաև դրա հետևանքների և ռիսկերի մասին:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում է, որ անձի համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է: Հետևաբար, անհրաժեշտ պայման է հարկադրաբար և կամավոր համաձայնության դեպքում սահմանել անձի նկատմամբ գործադրվող միջոցների, հետևանքների և ռիսկերի մասին տեղեկություն ստանալու իրավունքը: Ինչպես նաև սահմանել՝ նախքան միջամտության իրականացումն անձի բժշկական և հոգեկան վիճակի պատշաճ ուսումնասիրում, որը թույլ կտա զերծ մնալ առողջության վրա բացասական ներգործության իրականացումից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը կայացնում է պատճառաբանված որոշում նմուշներ ստանալու մասին, որտեղ մասնավորապես պետք է նշվեն՝ նմուշներ ստացող անձը, ումից պետք է ստացվի նմուշը, ինչ չափով և կոնկրետ ինչ նմուշներ պետք է ստացվեն, երբ և ում պետք է ներկայանա անձը՝ իրենից նմուշներ ստանալու համար, որտեղ և ում պետք է ներկայացվեն նմուշները՝ դրանք ստանալուց հետո:

Հիմք ընդունելով իր նկատմամբ իրականացվող միջամտության բնույթի, միջոցների և մեթոդների վերաբերյալ անձի տեղակացված լինելու իրավունքը՝ վերոնշյալ



պատճառաբանված որոշումն, ի թիվս այլնի, պետք է պարունակի միջամտության բնույթի, կիրառվող մեթոդների և միջոցների վերաբերյալ տեղեկություն: Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասում *«նմուշներ ստանալու համար»* բառակապակցությունից հետո ավելացնել *«միջամտության բնույթի, կիրառվող մեթոդների և միջոցների մասին տեղեկություն»*:

Նախագծով հաշվի չեն առնվել որոշ անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառման կառուցակարգերի առանձնահատկությունները: Հաշմանդամությունը, տարիքը կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներն առանձնահատուկ իրավական կարգավորման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես՝ արդյո՞ք նախագծի հեղինակները հաշվի են առել անչափահաս, հաշմանդամություն, ինչպես նաև հիվանդություն ունեցող անձից նմուշներ հարկադրաբար վերցնելու և հարկադրաբար փորձաքննության ենթարկելու առանձնահատկությունները և, առհասարակ, այն հարցը, թե նշված անձանց նկատմամբ կիրառելի՞ է նախատեսվող կարգավորումը, և արդյո՞ք այդ կարգավորումը բխում է մասնավոր շահի գերակայության և իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքից:

Գտնում ենք, որ որոշ անձանց նկատմամբ նորմի կիրառելիության հարցը պետք է ենթադրի առանձնահատուկ կարգավորումներ: Առանձնահատուկ կարգավորումներ ասելով, մասնավորապես, նկատի է առնվում անչափահասի օրինական ներկայացուցչի, հոգեբանի կամ մանկավարժի ներգրավումը: Ընդհանուր կանոն պետք է հանդիսանա նշված անձանց նկատմամբ առանձնահատուկ կարգավորումների նախատեսումը՝ պայմանավորված անձի կարգավիճակի հնարավոր խոցելիության աստիճանով:

Նախագծով, ինչպես նաև գործող օրենսգրքով կարգավորված չեն նաև ստացված նմուշների, որոնց ցանկը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 254-րդ հոդվածով (օրինակ՝ ԴԼԹ-ի) պահպանման ժամկետների և ոչնչացման կարգը: Օրենսդիրը միայն սահմանափակվել է այն կարգավորմամբ, որ նմուշները կցվում են արձանագրությանը: Մեր համոզմամբ՝ կենսաբանական նմուշները պետք է օգտագործվեն միայն տվյալ քրեական գործով և ենթարկա են ոչնչացման, երբ դադարում են քրեական գործով նշանակություն ունենալ:

## *2. Դիտարկումներ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ*

ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի [նախագծով](#) (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվել է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 339.1-ին հոդվածով՝ «1. վկայի կամ տուժողի կողմից քրեական



վարույթն իրականացնող մարմնի պահանջով օրենքով սահմանված կարգով համեմատական հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելը, քննման, ինչպես նաև փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներն էր կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվել է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի և վկայի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառման հնարավորություն՝ միաժամանակ սույն Նախագծով քննման, փորձաքննության ենթարկվելուց, ինչպես նաև համեմատական հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու համար նախատեսվել է քրեական պատասխանատվություն:

Այսինքն, քննման, փորձաքննության ենթարկվելուց, ինչպես նաև համեմատական հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու համար նախ անձը ենթարկվելու է ֆիզիկական հարկադրանքի, այնուհետև քրեական պատասխանատվության՝ քննման, փորձաքննության ենթարկվելուց, ինչպես նաև համեմատական հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու համար: Հաշվի առնելով, որ նախատեսվում է հարկադրաբար նմուշներ ստանալու հնարավորությունը՝ հիմնավոր չէ անձին դրանից հետո ենթարկել քրեական պատասխանատվության, քանի որ արդեն իսկ հարկադրաբար նմուշներ ստանալու դեպքում ապահովվում են անհրաժեշտ գործառնությունները, հավաստվում կամ հերքվում է գործի համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալը, ինչպես նաև՝ վերանում արարքի հանրային վտանգավորությունը:

Հանրային վտանգավորությունն արարքը՝ որպես հանցագործություն որակող հատկանիշներից մեկն է, որի բացակայության պայմաններում արարքը դադարում է հանցագործություն համարվել: ՀՀ Քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: 2. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը, թեև ձևականորեն, պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել»:

Այսպիսով, ֆիզիկական ուժի գործադրման միջոցով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ենթադրյալ ապացույցի ստացումն ի չիք է դարձնում կասկածյալի, մեղադրյալի, տուժողի և վկայի՝ քրեական դատավարության օրենսգրքով քննման, փորձաքննության, նմուշներ հանձնելու պարտականության չիրականացման հիմքով հանցագործության չբացահայտման վտանգը, այսինքն՝ վերանում է արարքի հանրային վտանգավորությունը, որի հիմքով արարքը չի կարող հանցագործություն համարվել, իսկ վերջինիս համար՝ սահմանվել քրեական պատասխանատվություն:

**Հիմք ընդունելով սույն վերլուծությամբ արտահայտած դիրքորոշումները՝ առաջարկում ենք՝**

1. Վերացնել հետաքննության մարմնի՝ Դատարան միջնորդություն ներկայացնելու իրավասությունը՝ քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականության կատարումն ապահովելու համար ֆիզիկական ուժ կիրառելու վերաբերյալ՝ այն թողնելով միայն քննիչին և դատախազին:
2. Ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ ամրագրված լրացուցիչ երաշխիքների առկայությունն օրենսդրական մակարդակով, մասնավորապես՝ քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականությունը հարկադրաբար կատարելու դեպքում՝ ապահովել բժշկի մասնակցությունը: Նախատեսել նախքան ֆիզիկական ուժի կիրառումը բժշկի կողմից եզրակացության տրամադրումը՝ անձի առողջական վիճակի և իրականացվող միջամտության համատեղելիության վերաբերյալ:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասում «նմուշներ ստանալու համար» բառակապակցությունից հետո ավելացնել «միջամտության բնույթի, կիրառվող մեթոդների և միջոցների մասին տեղեկություն»:
4. Հստակեցնել՝ արդյո՞ք «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված ֆիզիկական ուժը ենթակա է կիրառման առանձին խումբ անձանց նկատմամբ՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ առողջական բնույթի այլ հանգամանքներից, եթե այո, ապա՝ սահմանել առանձնահատկությունները և լրացուցիչ երաշխիքները. մասնավորապես՝ անչափահասի օրինական ներկայացուցչի համաձայնությունը ստալու պարտադիր պայմանը, կամ նշված փորձաքննությունների՝ հոգեբանի կամ մանկավարժի ներգրավմամբ իրականացումը և առհասարակ այն դեպքերը, երբ պարտադիր է փորձագետի կամ մասնագետի ներգրավումը:
5. Նմուշների ստացման քրեադատավարական ընթացակարգի կապակցությամբ

ապահովել այն նույն երաշխիքները, ինչ նախատեսված է քննման համար, մասնավորապես՝ այնպիսի նմուշների ստացման, որոնց համար պահանջվում է անձի մերկացումը, ապահովել միևնույն սեռի ընթերականների ներկայությունը և քննիչի բացակայությունը:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել, որ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված նմուշները պետք է օգտագործվեն միայն տվյալ քրեական գործով և ենթակա են ոչնչացման, երբ դադարում են քրեական գործով նշանակություն ունենալ:
7. Նախագծով սահմանել, որ անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը իրականացվում է՝ հաշվի առնելով 1) հանցագործության ծանրությունը (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը), 2) հարկադրանքի բնույթը, աստիճանը, 3) անձի առողջության համար վնասի առաջացման հնարավոր վտանգները: